

ՏԷՐ ԱՐԱՄ ԱԻ. ՔՀՆՅ. ՍՏԵՓԱՆԵԱՆ (Կենսագրական)

Տողերը, որ կը հետևին, կը փորձեն ներկայացնել մարդ մը, որ տարիներ շարունակ, թագնուած իր համեստութեան նստին, իր առօրեայի ծանրաբեռն ու բազմազբաղ ժամերուն մէջ, միշտ գտած է ժամանակը, պահը նուիրելու Հայց. Եկեղեցոյ ծառայութեան եւ Աւետարանական ճշմարտութեանց քարոզութեան՝ «Աստուծոյ փառքին համար»:

Ան, Հայ իրականութեան մէջ, կը պատկանի այն քիչերուն, որոնց կենսաքը ընդգծուած է Աստուծոյ դիմաց միշտ պատրաստակամ կանգնած ըլլալու գիտակցութեամբ:

Արամ Աւ. Սրկ. Ստեփանեան ծնած է Տէր-Զօր՝ Սուրիա, 1937 Մայիս 18-ին:

1945-ին փոխադրուած է Հալէպ, ուր իր պատանի հոգին բացած է Աստուածային ճշմարտութեան ծորումին՝ ծառայելով Հայց. Եկեղեցոյ որպէս դպիր, եւ ուր ստացած է իր Ազգ. նախակրթութիւնը:

1957-ին կ'անցնի Լիբանան, եւ հոն Լիբանանեան խառնարանի եռեւեփումին մէջ, ուր այնքան դիրքին էր, հազիւ իր ներհասարդութիւնը թեւակոխած անձի մը համար մոլորիլ, ան կը զգայ, օրէ օր իր ներսդին ուռճացող, հզօր կոչը Աստուծոյ ծառայութեան ու անբաւականութիւնը իր ուժերուն այդ ծառայութեան համար, ուստի կը նուիրուի Աստուածաբանական ուսման, յաճախելով Ամերիկեան Աստուածաբանական դպրոցը: 1961-ին, յաջողութեամբ ատարելէ ետք իր ուսումը, կը մեկնի Անգլիա, ուր կը հետևի Ռէլիգիոս Աստուածաշնչական վարժարանի Աստուածաբանական դասընթացքներուն:

1962-ին կ'անցնի Միացեալ Նահանգներ եւ կը հաստատուի Պոսթըն, միշտ մնալով մօտիկ Հայց. Եկեղեցոյ եւ Աւետարանական քարոզութեան:

1964-էն ի վեր ան, հաւատարմօրէն եւ պատասխանատուութեան բարձր գիտակցութեամբ, կը ծառայէ Պոսթընի Ս. Ստեփանոս Եկեղեցոյ եւ Հայց. Եկեղեցոյ Կիրակնօրեայ դպրոցին:

Նոյն թուականին, ան կը ծանօթանայ շնորհալի հայուհիի մը հետ՝ Օր. Մարգրիտ Գատեհճեանին եւ կ'ամուսնանան: Աստուածահաճոյ հայ բոյնը կը բախտատրուի երկու գաւակներով՝ Սեդա եւ Արա:

1967, Մարտ 26-ին, առ ի գնահատութիւն իր հաւատարմի եւ նուիրեալ ծառայութեանց, Սարկաւագութեան աստիճան կը շնորհուի իրեն օրուան Առաջնորդ եւ այժմ հոգեւոր Ս. Հրանդ Արքեպս. Խաչատուրեանի կողմէ, Պոսթընի Ս. Ստեփանոս Եկեղեցոյ մէջ:

Յետ այնօրիկ, Ազգային-Եկեղեցական կենսաքի մէջ իր ստանձած բոլոր պատասխանատուութիւնները ու պաշտօնները իրեն համար երբեք չեղան փառասիրութեան եւ հեղինակութեան որոնումի մը արդիւնքները, այլ, մարդիկ որքան տեսան իր նուիրումը եւ անսակարկ պատրաստակամութիւնը, զինք բեռնաւորեցին նորանոր եւ անլի բարձր պատասխանատուութիւններով, ու ան հետզհետէ եղաւ Կիրակնօրեայ վարժարանի դաստիարակ, եկեղեցոյ հոգաբարձու, հոգաբարձութեան փոխ-ատենապետ եւ 1982-ին ատենապետ:

Իսկ 1984-ին՝ ընտրուեցաւ Ազգային Երեսփոխան: Ան տարաւ այս բոլորը Աւետարանական պատգամի գիտակցութեամբ, թէ «Լուծ իմ քաղձը է եւ բեռն փոքրոգի»:

Արամ Աւ. Սարկաւագ 1978-էն ի վեր Ատենապետն է Պոսթընի կրօնադաստիարակչական Յանձնախումբին, որ շրջանին մէջ զարկ կուտայ Աւետարանական ճշմարտութեանց ծանօթացումին եւ Հայց. Եկեղեցոյ իսկական ճանաչումին: 1980-էն ի վեր ան, որպէս անդամ, կը գործակցի Ամերիկայի Արեւելեան Թեմի Առաջնորդութեան հովանաւորութիւնը վայելող Հ.Գ.Յ. –ին:

Իր այս բոլոր զբաղումներուն եւ ծառայութիւններուն հետ մէկտեղ, ան անձնական նախաձեռնութեամբ հրապարակած է կրօնական բովանդակութեամբ ձայնաւանկներ, իր տիկնոջ գործակցութեամբ հրատարակած է ու կը շարունակէ հրատարակել «Զարթօնք» կրօնաբարոյական պարբերաթերթը, եւ Պոսթընի տեղական ռատիօկայանէն, երկու տարի շարունակ, ձայնասփռած է կրօնական յայտագիրներ, միշտ աշխատելով տարածել Աւետարանը եւ ծանօթացնել Հայց. Եկեղեցին:

Իր այս երկար ծառայական կենսաքի ընթացքին, ան՝ Աւետարանական քարոզութեամբ գտնուած է Լիբանան, Սուրիա, Եգիպտոս, Հարաւային Ամերիկա, Գանատա, Գալիֆօրնիա, Ֆրանսա եւ Հայաստան:

9 Յունուար 1999 թուականին Արամ Աւ. Սարկաւագը ընդառաջելով Ազգային Առաջնորդարանի խնդրանքին, ստացաւ Քահանայական ձեռնադրութիւն ձեռնաք թեմիս Բարեւոյն Առաջնորդ՝ Բարձրաշնորհ Ս. Օշական Սրբազան Արքեպիսկոպոս Չոլոյեանի վերակոչուելով Ս. Արամ: Ձեռնադրութենէն ի վեր Ս. Արամ կը ծառայէ որպէս հոգեւոր հովիւր Ուայթինսփիլի Սբ. Աստուածածին Եկեղեցոյ, որ գործոն թեր կատարած է հայրենիքի ժողովրդեան սատար հանդիսանալու՝ կարիքաւորներու համար տունը կառուցանելով, որբանոցներ եւ հիւանդանոցներ քաջալերելով եւ առնտրական միջոցներ հաստատելով անգործներու համար:

Ս. Արամ եւ երեցկին Մարկրիթ այժմ կը բնակին Մաթըն, Մէտէչուսէթցի մէջ: